



«ՆՈՐ ՍԵՐՈՆՆԴ» «NEW GENERATION»
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ HUMANITARIAN NGO

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 🕒 Հանդիպումներ
- 🕒 Մրցանակաբաշխություն
- 🕒 Դասընթաց
- 🕒 Ֆիլմի դիտում





«ԱՅԼՆՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՀ ՅՈԹ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՒ ԵՐԵՒԱՆՈՒՄ



Տավուշի մարզ, ք. Իջևան, Մարտի 9, 2016 թ.

Մարտ ամսվա ընթացքում «Այլընտրանքային գինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ քննարկումներ տեղի ունեցան ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերում և Երևանում:

Քննարկումները կազմակերպել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Օրենքի գերակայությունը հանուն փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը իրականացվում է Վրաստանում Նիդեռլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ:

Քննարկումների նպատակն էր բարձրացնել հանրության իրազեկվածության մակարդակը ՀՀ Չինված ուժերում խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության և համապատասխան պաշտպանական մեխանիզմներ մշակելու կարևորության մասին:



Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Մարտի 9, 2016 թ.

Քննարկումների բանախոսը Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ, իրավապաշտպան Արթուր Սաքունցն էր:

Բանախոսը ներկայացրել է «Այլընտրանքային գինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու անցյալում և ներկայում արված առաջարկությունները:



Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ, իրավապաշտպան Արթուր Սաքունց

բազմաթիվ դիմում-բողոքներից հետո նշված օրենքում կատարվել են որոշակի փոփոխություններ, մասնավորապես լուծվել է կրոնական փոքրամասնությունների այլընտրանքային գինվորական ծառայության հարցը:

Մասնավորապես 2012 թ.-ին ՄԻԵԴ-ին ուղղված



Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Մարտի 10, 2016 թ.



Երևան, Մարտի 21, 2016 թ.

Խնդրահարույց է նաև այն, որ եթե անձը բանակում է փոխում կրոնական համոզմունքը, ապա նրան թույլ չի տրվում անցնել այլընտրանքային զինվորական ծառայության: Բացառվում է մարդու՝ երկու տարվա ընթացքում համոզմունքների փոփոխությունը, ինչը, բանախոսի համոզմամբ, ակնհայտ խախտում է:

Բանախոսն անդրադարձել է միջնակարգ դպրոցներում դասավանդվող «Ռազմագիտություն» առարկայի դասագրքերի բովանդակությանը:

Անցած տարիների ընթացքում Հայաստանում զինվորական ծառայությունից խուսափել է շուրջ 450-ից ավելի եհովայի վկա, ովքեր դատապարտվել են ազատագրվման, մինչդեռ ՀՀ Կառավարությունն այդ տարիների ընթացքում տարկետում է տվել մոտ 1150 մարդու, որոնց մեծ մասը Հայ առաքելական եկեղեցուն է դավանում:



Արարատի մարզ, ք. Արարատ, Մարտի 21, 2016



Արարատի մարզ, ք. Արտաշատ, Մարտի 21, 2016 թ.

Ըստ իրավապաշտպանի՝ տարբեր տեսակի զենքերի, այդ թվում նաև քիմիական զենքի մանրամասն նկարագրությունների փոխարեն կարելի է անդրադառնալ զինվորական ծառայության իրավունքների հետ կապված հարցերին:

Ա. Սաքունցը անդրադարձ է կատարել նաև բանակում ԳԳՏ/SUS անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությանը՝ շեշտելով միջանձնային հարաբերությունների կարգավորման կարևորությունը:

Նմանատիպ քննարկումները, բանախոսի և մասնակիցների համոզմամբ, օգնում են բարձրաձայնել խնդրո առարկա օրենքում նոր փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:



Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Մարտի 29, 2016 թ.



Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Մարտի 29, 2016 թ.

Հանդիպումներին մասնակցել են նշված մարզերի մարզպետարանների իրավաբանական, զորահավաքային նախապատրաստության, մարզկենտրոնների քաղաքապետարանների աշխատակիցներ, հասարակական կառույցների ներկայացուցիչներ և ուսանողներ:



ԼԳՖՏԻ ԱՆՁԱՆՑ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՌՆՉԿՈՂ «ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ 2015» ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2016 թ.-ի մարտի 21-ին կազմակերպել էր «**Լրագրողների և քաղաքացիական հասարակության համագործակցության կարևորությունը Հայաստանում ԼԳՖՏի անձանց իրավունքների պաշտպանության համար**» թեմայով քննարկում, որի ժամանակ տեղի ունեցավ նաև «ԼԳՖՏի անձանց նկատմամբ վերաբերմունքը, ատելության խոսքի դրսևորումները ու նրանց իրավունքների ոտնահարումները ՀՀ առցանց տիրույթում» և «Տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքների գնահատում» գեկույցների շնորհանդեսը և «Բազմազանություն և հավասարություն 2015» լրագրողական մրցանակաբաշխությունը:

Քննարկման նպատակն էր լրագրողներին և հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին երկխոսության հրավիրելու միջոցով բարձրաձայնել մարդու իրավունքների խախտման դեպքում հանրային լրագրության և քաղաքացիների ներգրավվածության կարևորության և ԼԳՖՏի անձանց իրավունքների խախտման դեպքերը էթիկապես ճիշտ ու հավասարակշռված լուսաբանելու կարևորության մասին:

Քննարկման բանախոսներն էին Զելսինյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը, «Մարդու իրավունքները Հայաստանում» կայքի խմբագիր Մերի Ալեքսանյանը, «Բեկում» ՀԿ-ի նախագահ Արթուր Մինասյանը, «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնի նախագահ Հասմիկ Մխիթարյանը և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի «Ինչպես դու» ամսագրի լրագրող Հովհաննես Իշխանյանը:



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ, իրավապաշտպան **Սերգեյ Գաբրիելյանը** բացման խոսքում, ներկայացնելով քննարկվող թեմայի շրջանակներում ՀԿ-ի ծրագրի ձեռքբերումներն ու ապագա անելիքները, կարևորեց այն լրատվամիջոցներին խրախուսելու կարևորությունը, որոնք ոչ խտրական մոտեցում են ցուցաբերել ԼԳՖՏի անձանց առնչվող



խնդիրները լուսաբանելիս և մատչելի ու անաչառ տեղեկատվություն են տրամադրել հասարակությանը: Ս. Գաբրիելյանի դիտարկմամբ ԼԳՏԻ անձանց խնդիրները ներկայացնելիս հիմնական խնդիրն այն է, որ ՉԼՄ-ները օբյեկտիվ տեղեկատվություն չեն ներկայացնում, իսկ լրատվամիջոցների աշխատակիցները տերմինաբանությանը և թեմային չեն տիրապետում, մյուս խնդիրն էլ այն է, որ հասարակությունը ևս թեմայի մասին տեղեկացված չէ:

Իրավապաշտպան **Արթուր Սաթուկյանը** «Քաղաքացիական հասարակության դերը լրագրողների հետ համագործակցելիս» թեման ներկայացնելու ժամանակ անդրադարձավ մի քանի էական խնդիրների՝ բազմակարծության բացակայություն, իմացության, տեղեկատվության և հետևողական աշխատանքի պակաս: «Խիզախություն և համարձակություն է պետք՝ ասելու այն, ինչ մտածում ես հատկապես մեզ նման ավտորիտար երկրներում, որտեղ բազմակարծությունը՝ որպես մշակույթ, գոյություն չունի: Բազմազանությունը կյանքի գոյության ի սկզբանե տրված բնական ձևն է: Այն ժխտելուն, հերքելուն ուղղված որևէ դրսևորում պետք է անտարբերության չմատնենք, և այս մոտեցումը պետք է ամրագրված լինի դպրոցից սկսած», -նշեց փորձագետը: Ա. Սաթուկյանի դիտարկմամբ խնդիր է նաև այն, թե ԼԳՏԻ խնդիրներին առնչվող թեմաների լուսաբանումը որքանով է առաջնահերթ լրատվական միջոցների համար: Օրինակ՝ զինված ուժերում ԼԳՏԻ անձանց ծառայության հարցերին վերաբերող հատուկետ հոդվածներ կան, և լրագրողները չեն տիրապետում այդ հարցը լուսաբանելուն: «ՉԼՄ-ներն էլ քաղաքականությունն ունեն, և այս տեսակետից ունենք շահերի հակասություն, շարժառիթների անհամապատասխանություն, և պոպուլիզմը, մակերեսային մոտեցումները կարող են որոշակի սահմանափակող գործոն հանդիսանալ»-եզրափակեց բանախոսը:



«Բեկում» ՀԿ-ի նախագահ և լրագրող **Արթուր Մինասյանը** ներկայացրեց «Լրագրողական էթիկան և գրագիտությունը խոցելի խմբերի հիմնախնդիրները լուսաբանելիս» թեման: Բանախոսի կարծիքով առկա խնդիրներն են չորրորդ իշխանության չկայացվածությունն ու խոսքի ազատության սահմանափակումները, որոնք համակարգային են: Սակայն խնդիր է նաև այն, որ լրագրողը կամ խմբագիրը հոմոֆոբ չեն, սակայն բավանակաչափ գրագետ չեն, այսինքն՝ չեն տիրապետում թեմային թեկուզ տերմինների մակարդակով, թեև բանախոսի դիտարկմամբ

հոմոֆոբիայի հետևանքով առաջացած անգրագիտությունն էլ լրջագույն պրոբլեմ է: Լրագրողական էթիկայի առումով Ա. Մինասյանը կարևորեց այն, որ լրագրողն իր գործունեության ընթացքում չպետք է խախտի մարդու իրավունքների հռչակագրի տրամաբանությունը: «Կան խոցելի խմբերի խնդիրների լուսաբանման հետ կապված ՄԻԵԴ վճիռներ, որոնք Հայաստանի համար պարտադիր են, և որոնց հղում կատարելով կարելի է լրագրողներից և լրատվամիջոցներից պահանջել, որ նրանք չտարածեն խտրականություն», -եզրափակեց բանախոսը:



Վերոնշյալ թեմային անդրադարձավ նաև «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնի նախագահ Հասմիկ Մխիթարյանը: Ի հավելումն լրագրողական Էթիկային և գրագիտությանն առնչվող մի շարք խնդիրների՝ նա առաջարկեց կրթել լրագրողներին, մասնավորապես խմբագիրներին՝ խոցելի խմբերի խնդիրները գրագետ լուսաբանելու համար:

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի «Ինչպես դու» ամսագրի լրագրող **Յովհաննես Իշխանյանը** անդրադարձավ «խոցելի խմբերի, մասնավորապես **ԼԳՖՏԻ** անձանց իրավունքների խախտման դեպքերի լուսաբանման խնդիրները» թեմային: Հ. Իշխանյանը խոսեց մամուլում աղմուկ հանած մի քանի լրագրողական նյութերի մասին՝ շեշտելով այն, որ լրագրողները **ԼԳՖՏԻ** անձանց խնդիրներին վերաբերող հարցազրույց են ունենում ոչ կոմպետենտ մարդկանց հետ, որոնց արտահայտած կարծիքները կարևոր են նրանով, որ հայտնվում են նյութերի վերնագրում: Հ. Իշխանյանի կարծիքով մի կողմից լրագրողը չի տիրապետում թեմային, մյուս կողմից էլ սա նաև խմբագրությունների խնդիրն է, քանի որ աշխատանքի են ընդունում նման լրագրողների:



«ԼԳՖՏԻ անձանց նկատմամբ վերաբերմունքը, ատելության խոսքի դրսևորումները ու նրանց իրավունքների ոտնահարումները ՀՀ առցանց տիրույթում» և «Տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքների գնահատում» զեկույցների շնորհանդեսներից հետո «Նոր ՄերոնոՂ» Մարդասիրական ՀԿ-ի բազմազանության խթանման ծրագրերի համակարգող **Արման Սահակյանը** ներկայացրեց **ԼԳՖՏԻ** անձանց հիմնախնդիրներին առնչվող «**Բազմազանություն և հավասարություն 2015**» լրագրողական մրցանակաբաշխության արդյունքները:

Մրցանակաբաշխությունը, ինչպես նշեց Ա. Սահակյանը, նպատակ ուներ միավորել Երևանի և մարզերի ՉԼՄ-ների ներկայացուցիչների ներուժը **ԼԳՖՏԻ** անձանց հիմնախնդիրների լուսաբանման շուրջ և խրախուսել ոլորտի հիմնահարցերը բարձրաձայնող լրագրողներին: Լավագույն լրագրողական նյութի գնահատման հանձնաժողովում ընդգրկված են եղել Հելսինկյան Քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը, «Բեկում» ՀԿ-ի նախագահ և լրագրող Արթուր Մինասյանը, «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնի նախագահ Հասմիկ Մխիթարյանը և սոցիոլոգ-հետազոտող Նանե Բագրատունին: Լավագույն լրագրողական նյութը գնահատվել է հետևյալ չափանիշներով՝ անաչառություն, թեմայի հրատապություն, մատուցման ձև, գրագիտություն, բազմակողմանիություն, հանգամանալից ներկայացում, լրագրողական Էթիկա, նորարարություն, բովանդակություն:



Արդյունքում լավագույն լրագրողական Նյութ Է ճանաչվել **Արման Ղարիբյանի** «Մեռական շահագործում եւ «կեղտոտ աշխատանք»»։ Նույնասեռական դատապարտյալները «դժոխքում» են ապրում» հոդվածը, որը հրապարակվել է 2015 թ.-ի հուլիսի 20-ին Մեդիալաբ լրատվական կայքում։ Հոդվածի հեղինակը, որ մրցանակաբաշխությանը միացավ սկայյա-գանգի միջոցով, շնորհակալություն հայտնեց և Մեդիալաբին՝ թեման առաջարկելու համար, և «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին՝ նման մրցանակաբաշխություն ստեղծելու համար,

ինչը խրախուսում է ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պրոֆեսիոնալ և օբյեկտիվ լուսաբանումը։ «Ցավոք սրտի ամբողջ լրատվական դաշտի մեծամասնությունը զբաղեցված է հոմոֆոբիկ ու կարծրատիպերի վրա հիմնված տեղեկատվությամբ, և նման Նյութերը իրականում շատ մարգինալ քնույթ են կրում։ Ձեռքի մատների վրա կարող եմ հաշվել այն խմբագիրներին, որոնք խրախուսում են խնդրի պրոֆեսիոնալ լուսաբանումը», -նշեց Ա. Ղարիբյանը։

Խրախուսական մրցանակների են արժանացել **Հովհաննես Իշխանյանի** «Ինքնատելություն. թաքնված նույնասեռական հոմոֆոբները» հոդվածը և **Ռոբերտ Անանյանի** «Իմ տրանսվեստիտ, տրանսգենդեր ընկերները վարում են շատ դաժան կյանք» տեսանյութը։

«ՄԻԱՎ-Ի ԵՒ ՁԻԱՅ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՒ ՄԻԱՎ-Ի ԹԵՄԱՏՎՈՐՄԱՆ ԿԱՐԵԻՐՈՒԹՅԱՆԸ», «ՄԱՐԴՈՒԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՄԻԱՎ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ


2016 թվականի մարտի 18-ին ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացրեց մեկօրյա սեմինար-վարժանք՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՅ-ի կանխարգելումը, ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավունքներ և ՄԻԱՎ» թեմաներով։ Սեմինար-վարժանքը կրում էր «...Վերաբերում է անգամ նրանց, ում թվում է, թե չի վերաբերում» խորագիրը։



Սեմինար-վարժանքի նպատակն էր նպաստել ՄԻԱՎ-ի և ՁԻԱՅ-ի կանխարգելմանը 18-30 տարեկան երիտասարդների շրջանում՝ բարձրացնելով նրանց իրազեկվածության մակարդակը և բացահայտելով թեստավորման կարևորությունը ՄԻԱՎ-ի վերաբերյալ, ինչպես նաև իրազեկելով ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների մասին։



Սեմինար-վարժանքի ընթացքում մասնակիցները ծանոթացան ՄԻԱՎ և ՁԻԱՀ տերմինների, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարբերության, փոխանցման ուղիների և կենսական հեղուկների, պահպանակների ճիշտ օգտագործման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու կարևորության մասին, այնուհետև մասնակիցներին ներկայացվեց մարդու իրավունքների ծագումնաբանությունը և զարգացման փուլերը, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, որոնք առնչվում են մարդու իրավունքներին, ինչպես նաև անդրադարձ կատարվեց «ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի դրույթներին:



Սեմինար-վարժանքի ավարտին մասնակիցներին ցուցադրվեց «...Վերաբերում է անզամ նրանց, ում թվում է, թե չի վերաբերում» ՄԻԱՎ-ի կանխարգելման և հետազոտության կարևորության մասին տեսահոլովակը՝ թարգմանված հայերեն «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից, որից հետո ցանկացողներին տրամադրվեց անվճար իրավաբանական խորհրդատվություն:

«ՍՈՒՖՐԱԺԻՍՏՈՒՅԻՆ» ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ ԵՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«...Եթե կանանց ընտրական իրավունք տանք, ապա այդ գործընթացը կանգնեցնել չի լինի, նրանք հնարավորություններ կպահանջեն՝ ընտրվել խորհրդարանում, լինել նախարար ու դատավոր...»



Այնպես է սկսվում «Սուֆրաժիստուհին» բրիտանական ֆիլմը, որի ցուցադրությունը կազմակերպվել էր 2016 թ.-ի մարտի 11-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում: Այն ներկայացնում է անցյալ դարասկզբին Բրիտանիայում իրենց ընտրական, տնտեսական և այլ իրավունքների մասին առաջին անգամ բարձրաձայնած կանանց պայքարը:

Ֆիլմը պատմում էր կանանց շարժման մասին, որը ծագել է Անգլիայում 19-20-րդ դարում: Կանայք այլևս չէին ցանկանում սպասել, թե երբ տղամարդիկ իրենց իրավունքներ կտան: Նրանց անվանեցին սուֆրաժիստուհիներ՝ կանանց ընտրական իրավունքի համար պայքարողներ: Սուֆրաժիստուհիները վառում էին Կառավարության տան անդամների տները, կտրում էին հեռախոսալարերը: Ճատ ջանքեր թափեցին սուֆրաժիստուհիները, մինչև վերջապես անցած դարում տեր դարձան իրենց իրավունքներին: Բայց այն ժամանակ կանանց շարժման ամենաաննկուն առաջամարտիկներն անգամ չէին կարող պատկերացնել, որ մի օր կանայք ոչ միայն ընտրելու և ընտրվելու իրավունք են ունենալու, այլև դառնալու են երկրի նախագահ ու վարչապետ, զբաղեցնելու են ուրիշ առանցքային պաշտոններ և տղամարդկանց հավասար կայացնելու են իրենց երկրի ու ժողովրդի ճակատագիրը վճռող որոշումներ: